



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

ՈՐՈՇՈՒՄ

----- 2017 թվականի №---Ս
ք. Երևան

**«ԱՐՓԱ-ԷՆԵՐԳԻԱ» ՍԱՀՄԱՆԱՓՈՎԿ ՊԱՏԱՄԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ
ՆԿԱՏՄԱՍԲ ՏՈՒԳԱՆՔ ԿԻՐԱՌԵԼՈՒ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ
ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2013 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 12-Ի
№203Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Հաշվի առնելով, որ՝

ա) «ԱՐՓԱ-ԷՆԵՐԳԻԱ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունը (այսուհետ՝ Ընկերություն) 2017 թվականի նոյեմբերի 28-ին դիմել է Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողով (այսուհետ՝ Հանձնաժողով)՝ հայտնելով, որ «Արփա» փոքր հիդրոէլեկտրակայանի (այսուհետ՝ Կայան) շահագործման ընթացքում պարզվել է, որ նախկինում նախատեսված մետաղական խողովակաշարի փոխարեն տեղակայվել է ապակեմանրաթելային խողովակաշար, որի արդյուքնում Կայանի հաշվարկային ճնշումը 42.2մ-ից դարձել է 47.14մ, իսկ Կայանի հաշվարկային հզորությունը 2622 կՎտ-ից դարձել է 3292 կՎտ, հաշվարկային ելքը մնացել է անփոփոխ: Ընկերությունը ներկայացրել է հզորության նոր հաշվարկները՝ դրական փորձաքննական եզրակացություններով և խնդրել է համապատասխան փոփոխություն կատարել Հանձնաժողովի 2013 թվականի հունիսի 12-ի №203Ա որոշմամբ Ընկերությանը տրամադրված էլեկտրական էներգիայի (հզորության) արտադրության №0500 լիցենզիայի (այսուհետ՝ Լիցենզիա) պայմաններում,

բ) Լիցենզիայի պայմանների՝

- 1) 6-րդ կետի համաձայն՝ լիցենզավորված անձին իրավունք է տրվում և պարտավորեցվում է կառուցել 2622 կՎտ հաշվարկային հզորությամբ «Արփա» փոքր հիդրոէլեկտրակայանը, արտադրել էլեկտրական էներգիա (հզորություն) ու այն վաճառել շուկայի կանոններով.
- 2) 7-րդ կետի 3-րդ ենթակետի համաձայն Կայանի հաշվարկային ճնշումը 42.2 մ է.

3) 34-րդ կետի համաձայն՝ լիցենզավորված անձը պարտավոր է Հանձնաժողովին անմիջապես հայտնել այն հանգամանքների մասին, որոնք հանգեցրել են կամ կարող են հանգեցնել Լիցենզիայի պայմանների խախտումների:

գ) Հանձնաժողովը 2017 թվականի նոյեմբերի 30-ից Ընկերության նկատմամբ հարուցել է վարչական վարույթ՝ Լիցենզիայի պայմանների 6-րդ, 7-րդ և 34-րդ կետերի պահանջների խախտման փաստի ուսումնասիրության նպատակով,

դ) հարուցված վարչական վարույթի շրջանակում Ընկերությունը 2017 թվականի դեկտեմբերի 5-ի գրությամբ հայտնել է, որ խախտումը տեղի է ունեցել չիմացության հետևանքով, ներկայումս միջոցներ են ձեռնարկում խախտումը վերացնելու ուղղությամբ,

ե) իրականացված վարչական վարույթի շրջանակում փաստվել է, որ Ընկերությունը, նախատեսված մետաղական խողովակաշարի փոխարեն տեղակայել է ապակեմանրաթելային խողովակաշար՝ խախտելով Լիցենզիայի պայմանների 6-րդ, 7-րդ և 34-րդ կետերը, և

հիմք ընդունելով «Էներգետիկայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 28-րդ հոդվածի 1-ին կետի «ա» ենթակետը, 30-րդ հոդվածի 1-ին կետը, 42-րդ հոդվածի 1-ին կետի «բ» ենթակետը, 5-րդ կետի «բ» ենթակետը, 6-րդ կետը, «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 70-րդ հոդվածի 1-ին մասը և Հանձնաժողովի 2013 թվականի նոյեմբերի 1-ի №374Ն որոշմամբ հաստատված՝ Էներգետիկայի բնագավառում գործունեության լիցենզավորման կարգը՝ **Հանձնաժողովը որոշում է.**

1. Լիցենզիայի պայմանների 6-րդ, 7-րդ և 34-րդ կետերի խախտման համար Ընկերության նկատմամբ կիրառել տուգանք մեկ միլիոն դրամ գումարի չափով:

2. Լիցենզիայի պայմանների 6-րդ կետում և 7-րդ կետի 4-րդ ենթակետում «2622» թիվը փոխարինել «3292» թվով, իսկ 7-րդ կետի 3-րդ ենթակետում «42.2» թիվը՝ «47.14» թվով:

3. Ընկերությանը՝

1) սույն որոշումն ուժի մեջ մտնելու պահից մեկամսյա ժամկետում որոշման 1-ին կետով նախատեսված գումարը 900005242327 հաշվեհամարով փոխանցել Հայաստանի Հանրապետության պետական բյուջե.

2) ընդունել ի գիտություն, որ իրավասու է սույն որոշումը բողոքարկել
Հանձնաժողով կամ Հայաստանի Հանրապետության վարչական դատարան՝ այն
ուժի մեջ մտնելու պահից երկամսյա ժամկետում:

4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Ընկերությանը օրենքով սահմանված կարգով
իրագեկելուն հաջորդող օրվանից:

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ
ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ
ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ՝**

Ռ. ՆԱԶԱՐՅԱՆ

ք. Երևան
----- 2017թ.